Հաշիվ վավերագիր
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

[1] Դուրս գրման ամսաթիվ		
2	Ապրիլ	2019 թ.
[4] Մատուցման ամսաթիվը		
2	Ապրիլ	2019 թ.

[2] Սերիա	[3] Համար
Բ	7655654014

Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
Սերիա	Համար
Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 3 5 3 8 1 1 2
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[10] Անվանումը	«ՎԻ ԳՐՈՒՊ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)
[11] Բանկային տվյալները	Ամերիաբանկ ՓԲԸ — N 1570015111280200
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	3րդ միկ.շրջ. 23 18
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	ՀՀ Ֆին. նախ.աշխ.գործառն.վարչ — N 900011000834
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[19] Լրացուցիչ տվյալներ	

[20] Ում միջոցով	**Անուն, ազգանուն**		
	Լիազորագիր	Համար	
		Ամսաթիվ	

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

NN Ը/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակաշրջանի քանակը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	6	5000		30000
2	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	2.5	5000		12500
3	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	6.08	5000		30400
4	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	22.17	5000		110850
5	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	15	5000		75000
6	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	8	5000		40000
7	Հայերեն-անգլերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	4.67	6800		31756
8	Հայերեն-պարսկերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	13.17	6950		91531.5
9	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	2	5000		10000

10	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	1.5	5000		7500
11	Հայերեն-վրացերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	12.33	6975		86001.75
12	Հայերեն-անգլերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	1.5	6800		10200
13	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	0.67	5000		3350
14	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	6.67	5000		33350
15	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	43	5000		215000
16	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	1.83	5000		9150
17	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	6	5000		30000
18	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	1.58	5000		7900
19	Հայերեն-քրդերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	6.5	7450		48425
20	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	12	5000		60000
21	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	5.33	5000		26650
22	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	10.08	5000		50400
23	Հայերեն-պարսկերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	4	6950		27800
24	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	1	5000		5000
25	Հայերեն-անգլերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	3	6800		20400
26	Հայերեն-անգլերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	3.33	6800		22644
27	Հայերեն-հնդկերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	4	8800		35200
28	Հայերեն-պարսկերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	10	6950		69500
Ընդամենը						1200508.25

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ **STEPANYAN HMAYAK 2301850293**

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

02/04/2019 15:54:07

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

քրեական գործով թարգման ներգրավելու մասին

06.10.2017թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի վարչական շրջանի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ, արդարադատության լեյտենանտ, Ա.Հ.Ալեքսանյանս քննարկելով վարույթիս թիվ 14879716 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Տատյանա Սերգեյի Գլադյուկը 2017թ. սեպտեմբերի 14-ին հաղորդում է տվել, որ 2017թ. սեպտեմբերի 13-ին՝ ժամը 15:40-ի սահմաններում, անհայտ անձը, օգտվելով Երևան քաղաքի Մոսկովյան 24 հասցեում գործող <<Մուրաբա ընդ շոփ>> խանութ-սրճարանի մուտքի դռան մոտ աշխատակից կամ հաճախորդ չլինելու հանգամանքից, գաղտնի հափշտակել է սեղանին դրված իրեն պատկանող <<Այֆոն 6>> մոդելի բջջային հեռախոսը՝ պատճառելով զգալի չափերի՝ 350.000 ՀՀ դրամի նյութական վնաս :

Դեպքի առթիվ 24.09.2017թ. ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 14879717 քրեական գործը, որը ենթակայության կարգով ուղարկվել է Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժին:

Նախաքննությամբ պարզվել է, որ Տատյանա Սերգեյի Գլադյուկը չի տիրապետում ՀՀ դատավարական գրավոր և բանավոր լեզվին, սակայն տիրապետում է ռուսերեն բանավոր և գրավոր լեզվին, ուստի անհրաժեշտ է նրան հնարավորություն ընձեռել թարգմանի օգնությամբ իրականացնելու օրենքով սահմանված իրավունքները:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-րդ մասի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 14879717 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել <<ՎԻ Գրուպ>> ՍՊԸ-ի թարգմանիչ Արինե Հայկի Հարությունյանին, ով ունի բարձրագույն կրթություն, ավարտել է Վ.Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանը, ազատորեն տիրապետում է՝ ինչպես ռուսերեն, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության /հայերեն/ գրավոր և բանավոր լեզվին:

2. Արինե Հարությունյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ Ա. Ալեքսանյան

Ծանոթացա թարգմանի իրավունքներին և պարտականություններից, նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ա. Հարությունյան
« » 2017թ.

ՈՐՈՇՈՒՄ

քրեական գործով թարգման ներգրավելու մասին

12.10.2017թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի վարչական շրջանի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ, արդարադատության լեյտենանտ, Ա.Հ.Ալեքսանյանս քննարկելով վարույթիս թիվ 14879716 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

Տատյանա Սերգեյի Գլադյուկը 2017թ. սեպտեմբերի 14-ին հաղորդում է տվել, որ 2017թ. սեպտեմբերի 13-ին՝ ժամը 15:40-ի սահմաններում, անհայտ անձը, օգտվելով Երևան քաղաքի Մոսկովյան 24 հասցեում գործող <<Մուրաբա ընդ շոփ>> խանութ-սրճարանի մուտքի դռան մոտ աշխատակից կամ հաճախորդ չլինելու հանգամանքից, գաղտնի հափշտակել է սեղանին դրված իրեն պատկանող <<Այֆոն 6>> մոդելի բջջային հեռախոսը՝ պատճառելով զգալի չափերի՝ 350.000 ՀՀ դրամի նյութական վնաս :

Դեպքի առթիվ 24.09.2017թ. ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 14879717 քրեական գործը, որը ենթակայության կարգով ուղարկվել է Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժին:

Նախաքննությամբ պարզվել է, որ Տատյանա Սերգեյի Գլադյուկը չի տիրապետում ՀՀ դատավարական գրավոր և բանավոր լեզվին, սակայն տիրապետում է ռուսերեն բանավոր և գրավոր լեզվին, ուստի անհրաժեշտ է նրան հնարավորություն ընձեռել թարգմանի օգնությամբ իրականացնելու օրենքով սահմանված իրավունքները:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-րդ մասի պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 14879717 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել <<ՎԻ Գրուպ>> ՍՊԸ-ի թարգմանիչ Արմինե Քաջիկի Մինասյանին, ով ունի բարձրագույն կրթություն՝ ավարտել է ԵՊՀ-ի միջազգային հարաբերություններ ֆակուլտետը, ազատորեն տիրապետում է ինչպես ռուսերեն, այնպես էլ ՀՀ քրեական դատավարության /հայերեն/ գրավոր և բանավոր լեզվին:

2. Արմինե Միասնյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ Ա. Ալեքսանյան

Ծանոթացա թարգմանի իրավունքներին և պարտականություններից, նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

«12» 10 2017թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ա. Ալեքսանյանս, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ վարույթումս քննված թիվ 14879716 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավված "Վի Գրուպ" ՍՊ ընկերության թարգմանիչներ Արինե Հարությունյանը և Արմինե Մինասյանը կատարել են հայերենից ռուսերեն և հակառակը բանավոր թարգմանություն 6ժ տևողությամբ։

Քննիչ Ա. Ալեքսանյան

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

16 օգոստոսի 2016թ. ք. Երևան

ՀՀ ՔԿ Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Մարուքյանս վերանայելով վարույթիս թիվ 10134016 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

2016թ. հուլիսի 27-ին Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազությունից ստացվել է Վիոլետա Մամիկոնի Գալստյանի փաստաբան Զորայր Հարությունյանի դիմումն այն մասին, որ 2010թ. ապրիլի 15-ին «Թոփ Մոթորս» ՍՊԸ-ի և Վիոլետա Մամիկոնի Գալստյանի միջև կնքվել է ավտոմեքենայի առքուվաճառքի ապառիկ պայմանագիր, որով ընկերությունը գնորդին որպես սեփականություն հանձնել է 11.952.000 ՀՀ դրամ արժողության 2010թ. արտադրության, սպիտակ գույնի «Մազդա 6» մակնիշի, JMZGH12F701223135 նույնացման համարով ավտոմեքենա: 2016թ. ավտոմեքենան փորձել են վաճառել և պարզվել է, որ նշված «Մազդա 6» մակնիշի ավտոմեքենան ոչ թե 2010թ. արտադրության է, այլ 2008թ. արտադրության և ընկերությունը խաբեության միջոցով 2008թ. արտադրության ավտոմեքենան Վ. Գալստյանին վաճառել է որպես 2010թ. թողարկման ավտոմեքենա և վերջինիս պատճառել է առանձնապես խոշոր չափերի հասնող 7.897.800 ՀՀ դրամին համարժեք 20.000 ԱՄՆ դոլարի գույքային վնաս:

Դեպքի առթիվ 2016 թվականի օգոստոսի 05-ին Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 10134016 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել հարցաքննել Վիոլետա Մամիկոնի Գալստյանին:

Նկատի ունենալով, որ Վիոլետա Մամիկոնի Գալստյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, հետևաբար նրան հարցաքննելու համար անհրաժեշտ է հրավիրել թարգմանիչ, որը տիրապետում է ռուսերենին, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83 հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Սույն քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի ռուսերենի թարգմանիչ Հմայակ Մանվելի Ստեփանյանին, որն քրեական գործով չշահագրգռված անձ է:

2. Թարգմանիչ Հմայակ Մանվելի Ստեփանյանին պարզաբանել նրա իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին, որի մասին նրան հայտնել ստորագրությամբ:

Ավագ քննիչ Ա.Մարուքյան

Սույն որոշումն ինձ հայտարարվել է «16» օգոստոսի 2016թ.: Ես նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի պարտականություններն ու իրավունքները:

Թարգմանիչ Հ.Ստեփանյան

Որոշումը հայտնեց, իրավունքներն ու պարտականությունները պարզաբանեց, քրեական պատասխանատվության մասին նախազգուշացրեց.

Ավագ քննիչ Ա.Մարուքյան

ՏԵՂԵԿԱՆՔ

16.08.2016

ք. Երևան

*Սույն տեղեկանքը տրվում է «Վի Գրուպ» ՍՊ ընկերության **թարգմանիչ՝ Հմայակ Ստեփանյանին**, որ ՀՀ ՔԿ Աջափնյակ և Դավթաշեն վարչական **շրջանների** քննչական բաժնում քննվող 10134016 քրեական գործով կատարել է հայերենից ռուսերեն և հակառակը բանավոր թարգմանություն 2ժ 30ր տևողությամբ:*

Ավագ քննիչ՝ Ա. Մարուքյան

ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանչ ներգրավելու մասին

«05» հոկտեմբերի 2016թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Լ.Գ.Վարդանյանս, գործուղված Արաբկիր՝ վարչական շրջանի քննչական բաժին, քննարկելով վարույթիս թիվ 14811016 քրեական գործի նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

2016թ. սեպտեմբերի 14-ին Վալենտինա Պավելի Շեկերան ոստիկանության Արաբկիր բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ 2013 թվականի մարտ ամսին Երևան քաղաքի Այգեձոր 78/1 շենքի 24 բնակարանի բնակչուհի Մարիաննա Յուրիկի Զարզարյանն իրեն պարբերաբար տվել է 828.480 ՀՀ դրամին համարժեք 2000 ԱՄՆ դոլար գումար՝ դրա դիմաց ՀՀ կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկը գերազանցող՝ ամսեկան տասից-քսան տոկոս տոկոսադրույք ստանալու պայմանավորվածությամբ, ինչից հետո մինչև 2015 թվականի օգոստոս ամիսն ինքը վերցրած գումարի դիմաց վճարել է 2.869.740 ՀՀ դրամին համարժեք 6.000 ԱՄՆ դոլար տոկոսագումար:

Փաստի առթիվ 26.09.2016թ. Արաբկիրի քննչական բաժնում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, հարուցվել է թիվ 14811016 քրեական գործը:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Վալենտինա Պավլի Շեկերան չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, այլ լիովին տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55, 15, 83 հոդվածներով

ՈՐՈՇԵՑԻ

1. Վարույթիս թիվ 14811016 քրեական գործով Արինե Հարությունյանին/ ծնվ. 04:12.1954թ. / ներգրավել որպես թարգմանիչ:
2. Որոշման մասին հայտնել Վ.Շեկերային:

ՀԿԳ ավագ քննիչ՝ [signature] Լ.Վարդանյան

Թարգմանիչին նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝		Ա.Հարությունյան
Վկա՝		Վ.Շեկերա
ՀԿԳ ավագ քննիչ՝		Լ.Վարդանյան

ՏԵՂԵԿԱՆՔ

ք. Երևան

ՀՀ ՔԿ Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ Լ. Գ. Վարդանյանս, գործուղված Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժին, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ վարույթում քննված թիվ 14811016 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավված «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ Արինե Հարությունյանը կատարել է հայերենից ռուսերեն և հակառակը բանավոր թարգմանություն 3ժ 5ր տևողությամբ:

ՀԿԳ ավագ քննիչ՝ **Լ. Վարդանյան**

Տեղեկանք

22.11.2016թ. ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում քննվող թիվ 14811016 քրեական գործով «Վի Գրուպ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից լիազորված Արինե Հարությունյանը մասնակցել է գործով վկա Վալենտինա Շեկերայի հետ իրականացված քննչական գործողություններին, որը տևել է երեք ժամ:

Ավագ քննիչ *Լ.Մարկոսյան*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

թարգմանիչ ներգրավելու մասին

«08» նոյեմբերի 2017թ. ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Մ.Շ.Աբդոյանս, վերանայելով թիվ 11194517 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

«Կաշի» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերեր՝ Արամ Հարությունյանը և Ալբերտ Ստեփանյանը դիմում են ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին այն մասին, որ ընկերության մյուս բաժնետեր Վարդան Կիրակոսյանը կեղծիքներ կատարելու միջոցով հափշտակել է առանձնապես խոշոր չափերի գումարներ:

Նյութերի նախապատրաստման ընթացքում՝ 2017թ. օգոստոսի 12-ին, Արամ Ալբերտի Հարությունյանը ոստիկանության Շենգավիթի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ «Կաշի» բաց բաժնետիրական ընկերության գլխավոր բաժնետեր՝ Վարդան Գևորգի Կիրակոսյանը վաճառել է իր բաժնեմասի 69 տոկոսը, իսկ մինչ վաճառելը՝ կեղծելով իր՝ Ա. Հարությունյանի և մյուս բաժնետեր Ա. Ստեփանյանի ստորագրությունները, շուկայականից ակնհայտ էժան գնով՝ 1դմ-ն 80 դրամի փոխարեն 20 դրամով կաշի է վաճառել՝ պատճառելով 40.000.000 ՀՀ դրամի վնաս, ինչպես նաև քանդել է «Կաշի» բաց բաժնետիրական ընկերության տարածքում գտնվող շինությունները, վաճառել շինանյութը և ստացված գումարները յուրացրել՝ ընկերությանը պատճառելով առանձնապես խոշոր չափի գույքային վնաս:

Փաստի առթիվ 2017թ. օգոստոսի 21-ին ոստիկանության Շենգավիթի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 11194517 քրեական գործը:

Նախաքննություն կատարելու համար թիվ 11194517 քրեական գործն ուղարկվել է Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժին: 24.08.2017թ. քրեական գործն ընդունվել է վարույթ, կատարվում է նախաքննություն:

Պարզվել է, որ գործով տուժող Ալբերտ Արշավիրի Ստեփանյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, տիրապետում է ռուսերեն գրավոր ու բանավոր լեզվին:

Նկատի ունենալով, որ Ալբերտ Արշավիրի Ստեփանյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին, ուստի անհրաժեշտ է հնարավորություն ընձեռնել նրան թարգմանչի օգնությամբ իրականացնել քրեադատավարական օրենքով սահմանված իր իրավունքները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Որպես թարգմանիչ հրավիրել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Արինե Հայկի Հարությունյանին, ով ազատորեն տիրապետում է ռուսերեն և հայերեն գրավոր ու բանավոր լեզվին, կարող է կատարել թարգմանություն հայերենից ռուսերեն և հակառակը, գործով չշահագրգռված անձ է:

2. Թարգմանիչ Արինե Հայկի Հարությունյանին պարզաբանել իր պարտականությունները և իրավունքները, նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության վերաբերյալ, որի մասին նրան հայտնել ստորագրությամբ:

Ավագ քննիչ՝ Մ. Աբդոյան

Սույն որոշումը ինձ հայտնվել է, նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված՝ թարգմանիչի պարտականություններն ու իրավունքները:

Թարգմանիչ՝ Ա. Հարությունյան

Տեղեկանք

20-ը մարտի 2019թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ս.Հ.Բեսայանս, վարույթիս թիվ 11194517 քրեական գործով, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ նշված քրեական գործով <<Վի Գրուպ>> ՍՊ ընկերության թարգմանչուհի Արինե Հայկի Հարությունյանը, նախաքննության ամբողջ ընթացքում, հայերենից ռուսերեն թարգմանություն կատարել է 22 ժամ 10 րոպե տևողությամբ:

Ավագ քննիչ Ս. Հ.Բեսայան

ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ հրավիրելու մասին

«26» դեկտեմբերի 2017թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ս.Թասալյանս, քննարկելով վարույթիս թիվ 17173717 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

Գևորգ Ղևոնդի Բաբախանյանը 2017 թվականի օգոստոսի 8-ին ոստիկանության Նոր Նորքի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ 2017 թվականի օգոստոսի 11-ին Հայկ Ռոբերտի Ավագյանն իր և կնոջ՝ Իրենա Բորիսի Կուչիցկայայի համար Ավան Խուդյակով փողոցի 4 հասցեում գործող «Միրաժ» հյուրանոցային համալիրում վարձակալել է թիվ 406 սենյակը, սակայն հյուրանոցին չի վճարել ընդհանուրը՝ մոտ 300.000 ՀՀ դրամ գումարը, ինչի հետևանքով հյուրանոցի տնօրեն՝ Աշոտ Ազատի Չոբանյանը 2017 թվականի օգոստոսի 20-ից չի վերադարձնում հյուրանոցի ընդունարանում հանձնված իր ՀՀ քաղաքացու անձնագիրը և պահանջում է վճարել գումարը:

Դեպքի առթիվ 2017 թվականի սեպտեմբերի 5-ին ոստիկանության Նոր Նորքի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 17873717 քրեական գործը:

07.09.2017թ. թիվ 17873717 քրեական գործը ոստիկանության Նոր Նորքի բաժնից ստացվել է Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին և ընդունվել վարույթ:

Քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել որպես վկա հարցաքննելու Իրենա Բորիսի Կուչիցսկայայից ով չի տիրապետում հայերեն գրավոր խոսքին / լեզվին /, սակայն ազատորեն տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր խոսքին:

Նկատի ունենալով, որ Իրենա Բորիսի Կուչիցսկայան չի տիրապետում հայերեն գրավոր խոսքին / լեզվին /, սակայն ազատորեն տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր խոսքին, իսկ «Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Արինե Հայկի Հարությունյանը ազատորեն տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին, ունի բարձրագույն կրթություն, շահագրգռված չի գործի ելքով, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

Թիվ 17873717 քրեական գործով «Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Արինե Հայկի Հարությունյանին ճանաչել թարգմանիչ՝ նրան պարզաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իրավունքները ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝ Ս.Թասալյան

Ծանոթացա որոշմանը, ինձ պարզաբանվել են իմ իրավունքներն ու պարտականությունները:

Թարգմանիչ՝ Արինե Հարությունյան

ՏԵՂԵԿԱՆՔ

15.06.2018թ.

քաղաք Երևան

Տրվում է «Վի-Գրուպ» ՍՊԸ-ի աշխատակից, թարգմանիչ Արինե Հայկի Հարությունյանին առ այն, որ նա Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում քննված թիվ 17173717 քրեական գործով կատարել է 15 ժամ բանավոր թարգմանություն:

Ավագ քննիչ՝ Սերգեյ Թասալյան

ՈՐՈՇՈՒՄ
ԹԱՐԳՄԱՆԻՉ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան « 22 » օգոստոսի 2017թ.

ՀՀ քննչական կոմիտեի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Լ.Գ.Հարությունյանս, վերանայելով վարույթիս թիվ 09101814 քրեական գործի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

Էրետա Արտաշեսի Ալլախվերդյանը, հանդիսանալով Երևան քաղաքի Քանաքեռ 16 փողոցի թիվ 7 հասցեի տան սեփականատեր, 2011թ. դեկտեմբերի 11-ին Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վճռով սեփականաշնորհել է Երևան քաղաքի Քանաքեռ 16 փողոցի թիվ 6 հասցեում գտնվող, նախկինում սեփականության իրավունքով Յուրի Մամիկոնի Սարկիսյանին պատկանող տունը, այն միացրել իր՝ Քանաքեռ 16 փողոցի թիվ 7 հասցեի տանը, որից հետո այդ տանը վերանորոգման աշխատանքներ կատարելու ընթացքում դիտավորությամբ ոչնչացրել է 2010թ.-ից Երևան քաղաքի Քանաքեռ 16 փողոցի թիվ 6 հասցեի տանը գտնվող, նախկին սեփականատեր Յ.Սարկիսյանի քրոջ դստերը՝ Աննա Ռաֆիկի Խանյանին պատկանող 50.000 դրամ արժողությամբ գազօջախը, 10.000 դրամ արժողությամբ խոհանոցային կահույքը, 100.000 դրամ արժողությամբ սեղանը իր աթոռներով, 250.000 դրամ արժողությամբ հյուրասենյակի կահույքը, 250.000 դրամ ընդհանուր արժողությամբ երկու հատ բազմոցները, երկու հատ բազկաթոռները, 20.000 դրամ արժողությամբ ծաղկի տակդիրը՝ Ա.Խանյանին պատճառելով խոշոր չափի՝ ընդհանուր 770.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Դեպքի առթիվ 24.01.2014թ. ՀՀ ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 09101814 քրեական գործը:

2014թ. մայիսի 16-ին Էրետա Ալլախվերդյանի բացակայության պայմաններում որոշում է կայացվել նրան ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասին և հայտարարվել է հետախուզում:

21.08.2017թ. Է.Ալլախվերդյանը ներկայացվել է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժին: Վերջինս հայտարարել է, որ չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ տիրապետում է ռուսերեն լեզվին և խնդրել է տրամադրել թարգմանիչ:

Նկատի ունենալով, որ սույն քրեական գործով մեղադրյալ Էրետա Արտաշեսի Ալլախվերդյանը տիրապետում է հայերեն բանավոր լեզվին, սակայն չի տիրապետում գրավոր լեզվին, ուստի անհրաժեշտ է հնարավորություն ընձեռնել նրան թարգմանիչի օգնությամբ իրականացնել քրեադատավարական օրենքով սահմանված իր իրավունքները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Սույն քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել «Վի Գրուպ» ՍՊԸ տնօրեն թարգմանիչ Հմայակ Մանվելի Ստեփանյանին, ով ազատորեն տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին, գործով չշահագրգռված անձ է:
2. Թարգմանիչ Հ.Ստեփանյանին պարզաբանել նրա իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի
քննչական բաժնի ավագ քննիչ ***Լ.Հարությունյան***

Սույն որոշումն ինձ հայտնվել է « » _______________ 2017թ.: Ես նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և նախաքննության տվյալները հրապարակելու համար 342-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի իրավունքները և պարտականությունները:

Թարգմանիչ

Որոշումը հայտնեց, իրավունքներ ու պարտականությունները պարզաբանեց, պատասխանատվության մասին նախազգուշացրեց:

Ավագ քննիչ Լ.Հարությունյան

ՏԵՂԵԿԱՆՔ

ք.Երևան 01 մարտի 2018թ.

ՀՀ քննչական կոմիտեի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում քննվող թիվ 09101814 քրեական գործով նախաքննության ընթացքում "Վի Գրուպ" ՍՊԸ-ի թարգմանիչ Համայակ Ստեփանյանը ներգրավվել է որպես ռուսերենի թարգմանիչ և կատարել 8 ժամ տևողությամբ բանավոր թարգմանություն, ինչպես նաև 34996 նիշ գրավոր թարգմանություն ռուսերենից հայերեն և հակառակը:

Ավագ քննիչ՝ *Լ.Գ.Հարությունյան*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԹԱՐԳՄԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14.01.2017թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, արդարադատության կապիտան՝ Լ.Հ.Հարությունյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 15169816 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2016թ. դեկտեմբերի 20-ին, ժամը 17:00-ին ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում հաղորդում է տվել Հնդկաստանի հանրապետության քաղաքացի Անանդա Կումար Մանոկարը, այն մասին, որ 2016թ. սեպտեմբեր ամսվա վերջերին Երևան քաղաքի Աբովյան փողոցում գտնվող Ա.Իսահակյանի արձանի մոտակայքում Հնդկաստանից Մեքսիկա վիզաներ տրամադրելու պատրվակով տուրիստական ընկերության տնօրեն Կարինե Ղազարյանը իրենից վերցրել է ընդհանուրը 15.550 ԱՄՆ դոլար գումար, սակայն չի տրամադրել վիզաները և խաբեությամբ ու իր վստահությունը չարաշահելու եղանակով տիրացել է նշված գումարին:

Դեպքի առթիվ 21.12.2016թ. ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ի կետով հարուցվել է թիվ 15169816 քրեական գործը և 22.12.2016թ. ուղարկվել է Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին՝ նախաքննություն կատարելու համար:

Նկատի ունենալով, որ նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել գործով տուժող Անանդա Կումար Մանոկարի մասնակցությամբ կատարել քննչական գործողություններ, սակայն վերջինս չի տիրապետում գրավոր և բանավոր հայերենին, այլ տիրապետում է գրավոր և բանավոր անգլերեն լեզվին, իսկ <<Վի Գրուպ>> ՍՊ ընկերության աշխատակից, անգլերեն լեզվի մասնագետ, Հռիփսիմե Աբգարի Խաչատրյանը ազատորեն տիրապետում է գրավոր, բանավոր հայերենին ու անգլերենին, ունի թարգմանչի որակավորում, ինչպես նաև այն, որ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է, և քրեական դատավարությունն էլ տարվում է հայերեն լեզվով, հետևաբար նրա հետ քննչական գործողություններ կատարելու համար անհրաժեշտ է հրավիրել թարգմանիչ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վարույթումս քննվող թիվ 15169816 քրեական գործով թարգմանիչ ճանաչել <<Վի Գրուպ>> ՍՊ ընկերության աշխատակից, անգլերեն լեզվի մասնագետ Հռիփսիմե Աբգարի Խաչատրյանին (ծնված՝ 30.01.1992թ.-ին, հասցե՝ Կոտայքի մարզ գ.Զովունի 79 շենք 2-րդ բնակարան, հեռախոս՝ 094-17-55-58):
2. Հռիփսիմե Խաչատրյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ԱՎԱԳ ՔՆՆԻՉ՝ ***Լ.Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

Որոշմանը ծանոթացա, օրինակը ստացա: Ինձ պարզաբանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել եմ ակնհայտ սուտ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝

ԱՎԱԳ ՔՆՆԻՉ՝ ***Լ.Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

ՏԵՂԵԿԱՆՔ

14.03.2019թ. ք.Երևան

Տրվում է ''Վի Գրուպ'' ՍՊԸ-ի աշխատակից Հռիփսիմե Խաչատրյանին առ այն, որ նա ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում քննված թիվ 15169816 քրեական գործով մասնակցել է որպես անգլերեն լեզվի թարգմանիչ և ընդհանուրը կատարել է 4 ժամ 40 րոպե բանավոր թարգմանություն:

Ավագ քննիչ՝ Լ.Հ.Հարությունյան

ՈՐՈՇՈՒՄ
ԹԱՐԳՄԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20.12.2017թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, արդարադատության կապիտան՝ Լ.Հ.Հարությունյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 13204617 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

2017թ. փետրվարի 13-ին Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությունից ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժին է ստացվել Արկադյա Գևորգյանի հաղորդումն այն մասին, որ ԻԻՀ քաղաքացիներ Քամյար Մորթազիանի և Ամին Բեյգինի միջև 2016թ. հունվարի 27-ին կնքվել է համագործակցության պայմանագիր, համաձայն որի՝ Քամյար Մորթազիանը 6 ամիս ժամկետով 30.000 ԱՄՆ դոլար գումար է տվել Ամին Բեյգիին, իսկ վերջինս պարտավորվել է այդ գումարը ձեռնարկատիրական նպատակներով գործածելով ստացված եկամուտից յուրաքանչյուր ամիս նվազագույնը 2500 ԱՄՆ դոլար գումար տալ Ք.Մորթազիանին, իսկ 2500 ԱՄՆ դոլարից ավել եկամուտի դեպքում՝ այն հավասարաչափ բաժանել միմյանց միջև: Ամին Բեյգին 2016թ. հուլիսի 1-ին գրավոր հաստատել է նաև Ք.Մորթազիանին ևս 22.000.000 ԻԻՀ թուման, առանց տոկոսի, պարտք լինելու հանգամանքը՝ միաժամանակ նշելով, որ ինչպես նշված, այնպես էլ նախկինում ունեցած պարտավորությունները կկատարի մինչև 2016թ. նոյեմբերի 1-ը, հակառակ դեպքում՝ վերջինիս կհանձնի Երևան քաղաքի Տիգրան Մեծ պողոտա 3/6 հասցեում գործող ''Նիմա'' ռեստորանը՝ իր ողջ գույքով, սակայն հետագայում պարզվել է, որ Երևան քաղաքի Տիգրան Մեծ պողոտա 3/6 հասցեում Ամին Բեյգինի անվամբ անշարժ գույք հաշվառված չէ և վերջինս խաբեությամբ հափշտակել է նշված 30.000 ԱՄՆ դոլար և 22.000.000 ԻԻՀ թուման գումարները:

Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության ԵՔՎ Կենտրոնական բաժնում նախապատրաստվել են նյութեր, որոնցով վարույթ իրականացնող մարմինը հիմնավորված համարելով, որ Ք.Մորթազիանի և Ա.Բեյգինի միջև առկա է քաղաքացիաիրավական բնույթի վեճ, որը ենթակա է լուծման քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով, 2017թ. փետրվարի 23-ին որոշում է կայացրել ՀՀ Քր. դատ. օր-ի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Նշված որոշման դեմ 2017թ. մարտի 6-ին բողոք է ներկայացրել Ք.Մորթազիանի ներկայացուցիչ Ա.Գևորգյանը:

2017թ. մարտի 13-ին Երևան քաղաքի դատախազի պաշտոնակատար Լ.Գրիգորյանը, քննարկելով քրեական գործ հարուցելը մերժելու մասին 2017թ. փետրվարի 23-ի որոշման դեմ Ք.Մորթազիանի ներկայացուցիչ Ա.Գևորգյանի բողոքը, որոշում է կայացրել ներկայացված բողոքը մերժելու և քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման օրինականությունը հաստատելու մասին:

Ք.Մորթազիանի ներկայացուցիչ Ա.Գևորգյանը քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման դեմ 2017թ. ապրիլի 10-ին բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան:

Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը 2017թ. մայիսի 29-ին որոշում է կայացրել Ք.Մորթազիանի բողոքը բավարարելու և քրեական գործ հարուցելը մերժելու մասին ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնի հետաքննիչ Տ.Գևորգյանի 2017թ. փետրվարի 23-ի որոշումը վերացնելու մասին:

2017թ. օգոստոսի 31-ին Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Գ.Մադոյանի կողմից Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2017թ. մայիսի 29-ի որոշման դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք:

2017թ. հոկտեմբերի 2-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, քննության առնելով ներկայացված բողոքը, որոշում է կայացրել այն մերժելու և Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2017թ. մայիսի 29-ի որոշումը օրինական ուժի մեջ թողնելու մասին:

17.11.2017թ. Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ա.Վարդանյանի կողմից որոշում է կայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով թիվ 13204617 քրեական գործը հարուցելու մասին և 20.11.2017թ. նախաքննություն կատարելու համար այն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին:

Նկատի ունենալով, որ նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել գործով տուժող Քամյար Մոլթագիանի մասնակցությամբ կատարել քննչական գործողություններ, սակայն վերջինս չի տիրապետում գրավոր և բանավոր հայերենին, այլ տիրապետում է գրավոր և բանավոր պարսկերեն լեզվին, իսկ <<Վի Գրուպ>> ՍՊ ընկերության աշխատակից, պարսկերեն լեզվի մասնագետ, Հրանուշ Մկրտիչի Թախմայանին ազատորեն տիրապետում է գրավոր, բանավոր հայերենին ու պարսկերենին, ունի թարգմանչի որակավորում, ինչպես նաև այն, որ Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է, և քրեական դատավարությունն էլ տարվում է հայերեն լեզվով, հետևաբար նրա հետ քննչական գործողություններ կատարելու համար անհրաժեշտ է հրավիրել թարգմանիչ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով, 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վարույթումս քննվող թիվ 13204617 քրեական գործով թարգմանիչ ճանաչել <<Վի Գրուպ>> ՍՊ ընկերության աշխատակից, պարսկերեն լեզվի մասնագետ Հրանուշ Մկրտիչի Թախմայանին (ծնված՝ 13.01.1964թ.-ին, հասցե՝ ք.Աշտարակ Րաֆֆու փողոց 54-րդ տուն, հեռախոս՝ 041-13-11-92):
2. Հրանուշ Թախմայանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ԱՎԱԳ ՔՆՆԻՉ՝ *Լ.Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Որոշմանը ծանոթացա, օրինակը ստացա: Ինձ պարզաբանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել եմ ակնհայտ սուտ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝

ԱՎԱԳ ՔՆՆԻՉ՝ *Լ.Հ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

ՏԵՂԵԿԱՆՔ

14.03.2019թ. ք.Երևան

Տրվում է ''Վի Գրուպ'' ՍՊԸ-ի աշխատակից Հրանուշ Թախմազյանին առ այն, որ նա ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում քննված թիվ 13204617 քրեական գործով մասնակցել է որպես պարսկերեն լեզվի թարգմանիչ և ընդհանուրը կատարել է 13 ժամ 10 րոպե բանավոր թարգմանություն:

Ավագ քննիչ՝ Լ.Հ. Հարությունյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Թարգմանիչ ներգրավելու մասին

07 դեկտեմբերի 2016թ. ք.Երևան

ՀՀ Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ, արդարադության ավագ լեյտենանտ՝ Ա.Ս.Կարախանյանս, քննարկելով Սաիմ Ավջըի ինքնասպանության վերաբերյալ նախապատրաստված նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2016թ-ի նոյեմբերի 8-ին ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնում հաղորդում և բացատրություն է տվել Գյավազ Խուդոյի Սլոյանն այն մասին, որ ս/թ-ի նոյեմբերի 7-ին ժամը 22:30-ի սահմաններում իր ծանոթներ Շուշանիկ Ռուբենի Մարտիրոսյանը, Նարինե Հրանտի Խաչատրյանը, Անի Կարենի Կարապետյանը, Սոնա Հովիկի Միսակյանը և Նարինե Վաղարշակի Գեղամյանը Երևան քաղաքի Ազատության 2 հասցեում գտնվող «Հաղթանակ» զբոսայգու «Մայր Հայաստան» հուշահամալիրի հետնամասում վիճաբանել են իր հետ, որի ընթացքում ծեծի են ենթարկել և բռնություն գործադրել իր նկատմամբ՝ քաշել են մազերից, ձեռքերով հարվածներ հասցրել գլխին և դեմքին, իսկ Շ.Մարտիրոսյանը զենքի բռնակով երկու անգամ հարվածել է գլխին՝ պատճառելով ֆիզիկական ցավ:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Ն.Խաչատրյանը հաղորդում և բացատրություն է տվել այն մասին, որ նույն վիճաբանության ընթացքում Գ.Սլոյանը բռնություն է գործադրել իր նկատմամբ՝ քաշել է իր մազերից՝ պատճառելով ֆիզիկական ցավ:

Համաձայն փորձագետի թիվ 3413 եզրակացության Գ.Սլոյանի մարմնական վնասվածքը՝ գլխի գագաթային շրջանի արյունազեղման ձևով պատճառվել է բութ առարկայով, որը առողջության թեթև վնասի հատկանիշներ չի արունակում:

Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի հետաքննչական բաժնում 18.11.2016թ. ՀՀ քրեական օրենսգրքի 118 հոդվածով և 235-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 09172616 քրական գործը:

21.11.2016թ. թիվ 09172616 քրեական գործն ուղարկվել է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժին:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Սոնա Միսակյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ ազատորեն տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վարույթիս 09172616 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն, թարգմանիչ՝ Համայակ Ստեփանյանին, որին պարզաբանել ՀՀ

քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածը և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քանաքեռ-Զեյթուն քննչական բաժնի քննիչ՝ Ա.Ս.Կարախանյան

Որոշման հետ ծանոթացա, իմ իրավունքները և պարտականությունները ինձ պարզաբանված են
Թարգմանիչ՝ Հ. Աստվածատրյան

« 07 » դեկտեմբեր 2016թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

ք. Երևան

Տրվում է առ այն, որ <<Վի Գրուպ>> ՍՊԸ-ի աշխատակից Հմայակ Ստեփանյանը << ՔԿ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում քննված թիվ 09172616 քրեական գործով մասնակցել է որպես թարգմանիչ և կատարել 2ժ տևողությամբ ռուսերեն լեզվից հայերեն և հակառակը բանավոր թարգմանություն:

Քանաքեռ-Զեյթուն քննչական բաժնի քննիչ՝ Ա. Ս. Կարախանյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Թարգմանիչ ներգրավելու մասին

17 փետրվարի 2017թ — ք.Երևան

ՀՀ Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ՝ Ա.Ս.Կարախանյանս, քննարկելով վարույթիս թիվ 09154517 քրեական գործի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2017թ-ի փետրվարի 12-ին ժամը՝ 05:00-ի սահմաններում Արթուր Գարուշի Գալստյանը ապօրինի մուտք է գործել Երևան քաղաքի Ն.Սուրենյան փողոցի 11 Ա շենքի 8-րդ հարկի շքամուտքում գտնվող Ալլա Ալբերտի Մարգարյանին պատկանող խորդանոց և այնտեղից գաղտնի հափշտակել է զգալի չափերի՝ 10.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության՝ <<Նովա>> մոդելի էլեկտրական տաքացուցիչ, թվով մեկ հատ փայտե արձանիկ, թվով մեկ հատ 3 լիտրանոց տարա՝ կիսատ լցված օղիով և թվով մեկ հատ 0.5 լիտրանոց տարայով օղի:

Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնում 14.02.2017թ. ՀՀ քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով հարուցվել է թիվ 09154517 քրեական գործը:

Նույն օրը՝ 14.02.2017թ. թիվ 09154517 քրեական գործն ստացվել է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժին:

Նախաքննության ընթացքում Ալլա Մարգարյանը հայտարարել է, որ չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ ազատորեն տիրապետում է ռուսերեն գրավոր լեզվին, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վարույթիս թիվ 09154517 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Համայակ Ստեփանյանին, որին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածը և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քանաքեռ-Զեյթուն քննչական բաժնի քննիչ՝ — **Ա.Ս.Կարախանյան**

Որոշման հետ ծանոթացա, իմ իրավունքները և պարտականությունները ինձ պարզաբանված են

Թարգմանիչ՝ Հ. Ստեփանյան

« 17 » փետրվար 2017թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

ք. Երևան

Տրվում է առ այն, որ <<Վի Գրուպ>> ՍՊԸ-ի աշխատակից Հմայակ Ստեփանյանը ՀՀ ՔԿ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում քննված թիվ 09154517 քրեական գործով մասնակցել է որպես թարգմանիչ և կատարել 1ժ 30ր տևողությամբ ռուսերեն լեզվից հայերեն և հակառակը բանավոր թարգմանություն

Քանաքեռ-Զեյթուն քննչական բաժնի քննիչ՝ Ա. Ս. Կարախանյան

+

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ հրավիրելու մասին

17-ը մայիսի 2017թ. քաղաք Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, արդարադատության մայոր Ա.Հ.Կարապետյանս, վերանայելով թիվ 12134114 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2014թ. մայիսի 28-ին՝ ժամը 12:00-13:00-ն, ընկած ժամանակահատվածում Վրաստանի Հանրապետության քաղաքացի Սոսո Խաբուլիանին քննությամբ չպարզված անձի հետ ուրիշի գույքը գաղտնի հափշտակելու դիտավորությամբ տեխնիկական միջոցների գործադրմամբ փորձել են ապօրինի մուտք գործել Էդուարդ Խաչատրյանին պատկանող Երևան քաղաքի Արցախի 6բ շենք 62 բնակարան, սակայն հանցավոր մտադրությունն ավարտին չեն հասցրել իրենց կամքից անկախ հանգամանքներում, այն է՝ հիշյալ հասցեի սեփականատեր Է.Խաչատրյանը նկատել է վերջիններիս, փորձել է կանխել նրանց գործողությունները, ինչի հետևանքով նրանք փախուստի են դիմել:

Դեպքի առթիվ ոստիկանության Էրեբունու քննչական բաժնում 28.05.2014թ. ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով հարուցվել է թիվ 12134114 քրեական գործը:

29.07.2014թ. կայացված որոշմամբ Սոսո Խաբուլիանիին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քր. օր. 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով, նույն օրը որոշում է կայացվել նրա նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին, որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2014թ. օգոստոսի 29-ին թիվ 12134114 քրեական գործի վարույթը ՀՀ քր. դատ. օր.-ի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով կասեցվել է:

2017 թվականի մայիսի 17-ին Սոսո Խաբուլիանին Մոսկվա-Երևան չվերթի ժամանումից հետո ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի աշխատակիցների կողմից ժամը 15:10-ին «Զվարթնոց» օդանավակայանից բերման է ենթարկվել ոստիկանության Էրեբունու բաժին: Նույն օրը որոշում է կայացվել քրեական գործով կասեցված վարույթը վերսկսելու մասին:

Քրեական գործի քննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել մեղադրյալ Սոսո Խաբուլիանիի մասնակցությամբ կատարել քննչական և դատավարական գործողություններ, սակայն Ս.Խաբուլիանին չի տիրապետում հայերեն բանավոր և գրավոր լեզվին:

Նկատի ունենալով, որ անհրաժեշտ է հարցաքննել Սոսո Խաբուլիանիին, իսկ Նելլի Գեորգիի Թոռոյանը ազատորեն տիրապետում հայերեն և վրացերեն լեզուներին, շահագրգռված չի գործի ելքով, ուստի ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 55-րդ, 15-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Նելլի Գեորգիի Թոռչյանին /ծնված 17.07.1956թ., անձնագիր AM 0331506, բարձրագույն կրթությամբ/ հրավիրել որպես թարգմանիչ, նրան պարզաբանել ՀՀ քր. դատ. օր-ի 83-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քր. օր-ի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:
2. Սույն որոշման մասին հայտնել Ն.Թոռչյանին և նրան պարզաբանել որպես թարգմանիչի՝ ՀՀ քր. դատ. օր. 83 հոդ. նախատեսված իրավունքներն ու պարտականությունները:

Ավագ քննիչ՝ Ա.Հ.Կարապետյան

Որոշումն ինձ հայտնվել է, պարզաբանվել են որպես թարգմանիչի՝ ՀՀ քր. դատ. օր. 83-րդ հոդ. նախատեսված իրավունքներն ու պարտականությունները:

Թարգմանիչ՝ Ն.Գ.Թոռչյան

Որոշումը հայտնեց և իրավունքներն ու պարտականություններ պարզաբանեց՝

Ավագ քննիչ՝ Ա.Կարապետյան

ՏԵՂԵԿԱՆՔ

12.06.2017թ. ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում քննվող թիվ 12134114 քրեական գործով <Վի Գրուպ> ՍՊԸ-ի տնօրենի կողմից լիազորված Նելլի Թոռչյանը 2017թ. հունիսի 12-ին մասնակցել է մեղադրյալ Սոսո Խաբուլիանիի հետ իրականացված քննչական գործողությանը, որը տևել է 2,5 ժամ:

Ավագ քննիչ Ս.Կարապետյան

ՏԵՂԵԿԱՆՔ

ք.Երևան 13.11.2018թ.

ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ՀԿԳ քննիչ Ա.Կարապետյանս կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ վարույթում քննված թիվ 12134114 քրեական գործով՝ որպես թարգմանիչ ներգրավված "Վի Գրուպ" ՍՊ ընկերության թարգմանիչ Նելլի Թորոսյանը կատարել է փաստաթղթերից հայերեն և հակառակը բանավոր թարգմանություն՝ 9 ժամ 50 րոպե տևողությամբ:

ՀԿԳ քննիչ՝ Ա.Կարապետյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
Քրեական գործով թարգմանիչ ներգրավելու մասին

ք.Երևան

09 հոկտեմբերի 2017թ.

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, արդարադատության ավագ լեյտենանտ Վ.Մ.Բավեյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 13888317 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2017 թվականի սեպտեմբերի 17-ին ժամը 19:20-ին ոստիկանության Կենտրոնական բաժնում հաղորդում է տվել Ալեն Վազգենի Առաքելյանն այն մասին, որ 17.09.2017 թվականին ժամը 04:30-ի սահմաններում Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայում անհայտ . անձը, զանգահարելու պատրվակով, իրենից վերցրել է իր «Այֆոն 5» մոդելի բջջային հեռախոսը 120.000 ՀՀ դրամ արժողությամբ, սակայն հեռախոսը չի վերադարձրել և դիմել է փախուստի:

Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնում 2017 թվականի սեպտեմբերի 20-ին ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 13888317 քրեական գործը և նախաքննություն կատարելու համար ուղարկվել ՀՀ քննչական կոմիտեի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ հանցագործությունը կատարել է Գևորգ Սահակի Սահակյանը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քրեական գործով Ալեն Առաքելյանը չի տիրապետում հայերեն լեզվին, տիրապետում է անգլերեն բանավոր ու գրավոր լեզվին, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունն իրականացվում է հայերեն լեզվով, անհրաժեշտություն է առաջացել սույն քրեական գործով վարույթին ներգրավել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Մանիկ Հենրիկի Աչարյանին՝ կատարվելիք քննչական գործողություններին մասնակցելու համար:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

3. Թիվ 13888317 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Մանիկ Հենրիկի Աչարյանին՝ / 005149513/:
4. Մանիկ Հենրիկի Աչարյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝ [signature] Վ.Մ.Բավեյան

Ծանոթացա թարգմանիչի իրավունքներին և պարտականություններին, նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

[signature] Մ. Աչարյա

«09» 10 2017թ.

[illegible]

ք.Երևան

27.10.2018թ.

[illegible] 1588317 [illegible]

[illegible]

[illegible]

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Թարգմանիչ հրավիրելու մասին

15-ը նոյեմբերի 2017թ. ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևանի քննչական վարչության քննիչ Գ.Գալստյանս, վերանայելով ավտովթարի վերաբերյալ նախապատրաստված նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2017 թվականի նոյեմբերի 6-ին՝ ժամը 16:20-ի սահմաններում, Երևան քաղաքի Ոսկանյան և Տիչինա փողոցների խաչմերուկում միմյանց են ընդհարվել Արշավիր Արմենի Ստեփանյանի վարած <<Մերսեդես-Բենց>> մակնիշի, 95 TT 959 հաշվառման համարանիշի և Վարդան Կորյունի Նիկոլյանի վարած <<Իսուզու>> մակնիշի, 01 VU 064 հաշվառման համարանիշի ավտոմեքենաները, ինչի հետևանքով վերջինիս ուղևորներ մանկահասակ՝ Եվա Գոռի Մկրտչյանը և Ծաղիկ Խաչիկի Մկրտչյանը ստացել են մարմնական վնասվածքներ:

Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության ՃՈ ծառայության ՃՏՊ գործերով հետաքննության և վարչական վարույթի իրականացման բաժանմունքում նախապատրաստված նյութերը 09.11.2017թ. ստացվել են ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչությունում, որտեղ նախապատրաստվում են թիվ 331 նյութերը:

Նկատի ունենալով, որ սյուն նյութերի ընթացքում անհրաժեշտ է բացատրություն վերցնել Արշավիր Արմենի Ստեփանյանից, ով չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, սակայն տիրապետում է հայերեն բանավոր լեզվին, ուստի անհրաժեշտ է հնարավորություն ընձեռնել նրան թարգմանչի օգնությամբ իրականացնել քրեադատավարական օրենքով սահմանված իր իրավունքները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15-րդ և 83-րդ հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.Սույն նյութերով որպես թարգմանիչ ներգրավել Արինե Հայկի Հարությունյանին (լիազորագիր տրված «Վի Գրուպ» ՍՊ ընկերության կողմից) և նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

2. Որոշման մասին հայտնել Արինե Հարությունյանին:

Որոշման հետ ծանոթացա, իմ իրավունքները
և պարտականություններն ինձ պարզաբանված են,
թարգմանիչ՝

«15» նոյեմբերի 2017թ.

Թարգմանիչ

Քննիչ Գ.Գալստյան

ՏԵՂԵԿԱՆՔ

15-ը նոյեմբերի 2017թ. ք. Երևան

Երևան քաղաքի քննչական վարչության քննիչ Գ. Գալստյանս վարույթումս նախապատրաստվող թիվ 331 նյութերով կազմեցի սույն տեղեկանքն առ այն, որ <<Վի Գրուպ>> ՍՊԸ-ի թարգմանիչ Արինե Հայկի Հարությունյանը 2017 թվականի նոյեմբերի 15-ին՝ ժամը 17:30-ից մինչ ժամը 18:10-ն ընկած ժամանակահատվածում կատարել է բանավոր թարգմանություն հայերենից ռուսերեն և հակառակը:

ՔՆՆԻՉ՝ Գ. ԳԱԼՍՏՅԱՆ